



ԵԳԻՊՏՈՍ

ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՑ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆԽԻԿ Է



ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՑ 8

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6



ՓԻԻՆԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՁԵՌՔԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՄԷԿ ՂՐՈՒՇ ՈՂՋ

Բ. ՏԱՐԻ

15 ՅՈՒՆԻՍ 1901

ԹԻԻ 2

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Հորիզոնը վարդազոյն չերևիր Արեւելքի մէջ մասնաւորապէս այս պահուս։ Ախտանշաններ չեն պակսիր ազգարարող թէ արիւնոտ անակնկալներու նախընթաց օրերէն շատ հեռու չենք գտնուիր։

Արեւելեան խնդրին ծանրութեան կեդրոնը հիւսա փոխադրուած է Պալքանեան ցամաքակղզիին մէջ։ Մակեդոնական հարցը — այնքան հանդիսութիւններով լի Հայկական հարցին հետ — սկսած է արդէն անձկութեան առարկայ ըլլալ թէ՛ Բարձրագոյն Դրան և թէ՛ Եւրոպական գահլիճներուն։

Այս հարցը իր ներկայ վիճակին սրութիւնը կը պարտի Սօփիաի յեղափոխական քօմիթէին վերջերս ցոյց տուած պնդոտ դոյժունէութեան զորքրէական պիտի ըլլար մասամբ իսկ վերագրել Պուլկար կառավարութեան շատ արդար բայց քիչ ապահով մեղսակցութեան։ Աստուծոյ թաղարկները կ'ստանան

թիւնները — և ժողովուրդը — իրենց կործանարար հանճարին բոլոր նըրբութիւնները 'ի գարծ կը դնեն այն անդուսպ վայրագութեամբ որ յառկանիչը կը կազմէ ցեղին, 'ի վնաս նահանգի մը ուր իրենց տիրապետութիւնը ոգեւորի մէջ է։

Այս խնդրին պայթումը կոչուած է յառաջ բերել քաղաքական հետեւանքներու շարք մը, որոնց ամենէն նուազ սպեռնականը չէ ապահովապէս Պալքանեան փոքր պետութեանց միջընդհանուր խառնաչփոթութիւն մը։ Այս պատահականութիւնը, իր կողմէն, բնութիւնն ունի հզօրապէս ազդելու Եւրոպայի ներկայ կացութեան վրայ և մասնաւորապէս Աւստրիա-Հունգարիոյ և Ռուսիոյ յարաբերութեանց վրայ։ Հոս է Եւրոպական գահլիճներու մտատանջութեան աղբիւրը. հոս է յեղափոխական ուժերու զսպանակը։

Ոչ ոքի համար գաղտնիք մը չեն արդարեւ այն առանձնական դիտումները զոր կը տածեն այս երկու մեծ կայսրութիւնները Պալքաններու վրայ։ Ռուսական թագապետ յառաւիյները չը

պիտի հաւանին երբեք թոյլ տալ որ համալուսականութեան վերջերս ստացած հզօր թռիչին ազիտաբեր հարուածներ տրուին Պալքաններու մէջ որոնք ռուսական արիւնով ռուսացուած են և որոնք, մանաւանդ, կառաջնորդեն իրենց Մեծ նախահօր կտուած անհղական իտէալին — Կոստանդնուպօլիս: Նմանապէս Հատարուղիներու միապետութիւնը տրամադիր շերտեր, իր մասին, յօժարաբար զոհել ամբողջութիւնը իր առեւտրական շահերուն զոր ունի Պալքաններու մէջ որոնք պակասը կը լրացնեն կերպով մը գաղթային կալուածներու եւ որոնք բնական ու մօտաւոր վաճառանոց մը կ'ընծայեն երկրին ճարտարութեան արտագրութեան եւ սպառման միջև եղած աւելորդին:

Միւս կողմէն, յայտնի է թէ մինչև հիմա փոխադարձ անկեղծութեան եւ բարի կամքի վրայ խարսխուած մտերմական համաձայնութիւն մը չէ որ ճշգրիտ գլխաւոր յատկանիշը կը կազմէր Պալքանեան ազատագրեալ ազգերու միջև յարաբերութեանց: Հատերաշխութեան ոգիով առաջնորդուած հաւաքական գործակցութիւն մը սակայն պիտի իրագործէր անձնիւրին օրինաւոր ըզձանքները եւ իրենց բոլոր ճիգերը յփեղօրէն պիտի պտակուէին Օսմանի պաշաւոր աշխատութեան այդ եւրօպական յետին բեկորին վերջնական ազատագրութեամբ: Դժբազաբար, իրենց շահերուն հարեանցի հակառակութիւնը կրկնապատկուած ցեղային հակիրութեամբ ի յայտ կուգայ ընդդիմամարտ ձգտումներով: Անոնք իրենց յատուկ փառասիրութիւնները և մասնաւոր նպատակները ունին, որոնց մշտական բախումն է որ կը հայթայթէ Սուլթանին այն ուժը որով կապահովէ իւր իշխանութիւնը կայսրութեան այդ զպարզօրէն կոտորակին վրայ և նշանաբանը. բաժանեալ զիս սիրեցես, երբեք այնքան յաջողութեամբ չը գործադրուեցաւ որքան Մակեդոնիոյ մէջ:

Ահա ինչպէս...

ման և մտքերու գրգռութեան այս յարտակ վիճակն է որ հրդեհին կրակը իր մէջ կը հրահրէ: Ասոր համար է որ, 1897 տարուոյ ընթացքին մէջ, Ս. Բէթերդպուրկի և Վիէնայի դահլիճները անհրաժեշտ դատեցին հայեացքներու մասնաւոր փոխանակութիւն մը կատարել համաձայնութեան մը յանգելու համար իրերու արդի կացութեան պահպանման սկզբունքին փոխադարձ որդեգրութեան անհրաժեշտութեան մասին Պալքաններու մէջ:

Այդ կը թուի որ այս բերանացի պայմանագրութեան օրինակն ուժը սկսած է նուազիւ, ըլլա՛յ ժամանակին ազդեցութեամբ, ըլլա՛յ այլազան էնթրիկներու հակահարուածով: Ըջմարիտ է թէ ոչ նուազ լուրջերն այն նկատումներուն որոնք համաձայնութեան ընդհանուր խարխիսին տարրերը հայթայթեցին, կը շարունակեն դոյութիւն ունենալ — Չինական հաշցին յարուցած դժուարութեանց — Ռուսիոյ համար, և Բայխարաթի անկանոն գործարանաւորութեան տեւականութեան հետեւանքով — Աւստրիոյ համար: Բայց ատով նուազ պէտք չ'է համարիլ իբր ժամանակաց նշան մը կոմս Կօլուխովսքիի գործածած լեզուն Հունդարական Պատգամաւորութեանց Արտաքին յարաբերութեանց յանձնաժողովին առջև խօսած տարեկան մեծ ճառին մէջ. — «Անկարելի է դէպքերու խաղաղ ընթացքէն բոլորովին ստոյգ եղրակացութիւններ հանել ապագայի մասին, Պալքաններու մէջ տիրող կացութեան պատճառաւ, ուր բարեբախտաբար դոյութիւն ունեցող համաձայնութիւնը Աւստրիոյ եւ Ռուսիոյ միջև չը կրնա՛ր միշտ աշդեցիկ ըլլալ: Չարեւա՛նց շարաւարտիւն մը պիտի ըլլար նկատել զայն իբր հաւանականութ մը ալեւ անակնկալի դէտե՛ս Գոթոյ կենսը տեսնելու աշտեղակակի դէտե՛ս... Թեքեօրէն մեծեղ պիտի ըլլար կարծել թէ ալ կրնայ արգիլել, ալեւն զայրակոթիւն»:

Այս քիչ յարգանքի արտայայտութեանը 976 համապատասխան...

րութեան նկատմամբ բաւական թափանցիկ է կարենալ մինչեւ աստիճան մը հասու ըլլալու համար այն որոշ փոփոխութեան մասին որ հաւանօրէն պէտք է ստեղծուած ըլլայ միտքերու այն ընդհանուր վիճակին մէջ, որ կը տիրէր մինչև ցարդ վարող շրջանակներու մէջ Արևելեան գործերուն նկատմամբ:

Ինչ որ, միւս կողմէն, կը միտի որոշ ուժ մը տալու նախատեսելու այս եղանակին, հետեւեալ քանի մը գլխաւոր իրողութիւններն են, որոնք կատարուեցան Պալքաններու մէջ: Առաջինն է Ռուսիոյ և Սերպիոյ միջև զինուորական պայմանագրութիւն մը որուն շուրջը թայկի Վիէնայի թղթակիցը հաղորդեց և որ, թէպէտ պաշտօնապէս չը հաստատուեցաւ Ս. Իէթէրպպուրկի կառավարութեան կողմէն, սակայն ամէն պարագայի մէջ ճշմարտանման է: Միւսն արքային մահը — որ իր երկիրը միակողմանի զինուորական պայմանագրութեամբ մը Աւստրիոյ ազգացութեան տակ դրած էր — ինչպէս եւ երիտասարդ Ալեքսանդրի ամսանութիւնը գեղանի Տրակայի հետ, դիւրացուցին Օպրէնովիչի հիմնած թագաւորութեան վերաշահիլ իր ամենազօր ազատարարին եւ բնական պաշտպանին համակրութիւնը: Նմանապէս կարծէ հաշուի առնել Պուլկարօ-Սերպիական համաձայնութեան մը աղմուկը և Քարալէօֆի նախարարութեան կոմս Լամսորֆի հետ յարաբերութիւնները, որոնք ամենէն նշանակալից բարեկամական նկարագրովը դրոշմուած են: Այսպէս է որ համապատասխանութիւնը փոքր առ փոքր կը փոխադրուի դրական հողի մը վրայ եւ կը ճշդէ իր գոյութիւնը նիզակակցութեանց ձևին տակ:

Սլաւ ցեղերու այս մերձեցումը Չարին հովանիին տակ չը կրնար ոչ առանց մեծ երկիւղի գիտուիլ մնացեալ Յունական տիրական պետութեանց կողմէն եւ կարելի է նկատել այս իրողութեան իբր հակահարուածը այն տեսակրութեանը

թագաւորը և Ռումէններու թագաւորը, դիւթական Ապաճիաի մէջ, Աւստրիական հողի վրայ: Այս տեսակցութիւնը հաւանաբար նախերգանքն է այդ երկու Պալքանեան պետութեանց միջև նիզակակցութեան մը Փրանց-Նօղէֆ կայսեր վահանին տակ:

Մրցակցութեանց այս բնական դասաւորումով Արևելեան ինդիլը կը մտնէ նոր փուլի մը մէջ որուն արժէքը մեր տեսակետով դժուար է որոշել այս վայրկենիս: Ինչ որ ստոյգ է սա է թէ՛ ալ ղեցառքեան շրջանակի ռուսական սկզբունքն է որ կիրակութեան կը մտնէ իրերու ուժով, Պալքաններու մէջ: Այսպէս Ռումանիա, Յունաստան երբեակնիզակակցութեան ծիրին արբանեակները կը դառնան, իսկ Սերպիա, Պուլկարիա (և անհրաժեշտաբար Գարատաղ) Փրանքօ-Ռուս նիզակակցութեան: Ասկից կը հետևի որ այս պետութեանց միջև ծագած ու է վէճ մը կամ պատահար մը աւելի մասնաւոր եղանակով մը առարկայ պիտի ըլլայ Եւրոպայի ուշադրութեան:

Այս չէ ամէնը: Պալքաններու մէջ ընդհանուր կացութեան ամենէն գլխաւոր և անիշական դերակատարներն են բարձրագոյն Դուռը (այսինքն Սուլթանը և Սօֆիաի գօմիթէն: Իրենց այս հանդամանքը ծնունդ կառնէ մէկ կողմէն թուրք իշխանութեանց կեղեքումներէն վերին հրամանով, և միւս կողմէն Պուլկար յեղափոխական ուժերու անհամբեր գործունէութենէն: Իրողութիւն մը միայն ստոյգ է. ժողովրդին անտանելի դրութիւնը: Արդ, Սուլթանին կողմէն ընդհանուր կտորածի մը կազմակերպութիւնը և նմանապէս — իբր հետեւանք կամ իբր պատճառ այս կարելիութեան — ընդհանուր ապստամբութեան մը փութացումը Մակեդոնացիներու կողմէն այնպիսի պատահականութիւններ են որոնք եթէ իրականութեան վերածուին, չը պիտի թերանան հրդեհը վառելէ Պալքաններու մէջ: Այս պատահականութեանը հետեւեալ Պալքաններու մէջ:

պայի առջև, ճշգիւ այն պատճառներուն համար որոնց ակնարկեցի վերև: Հետեւաբար յանդգնութիւն մը չը պիտի ըլլար եղբակացնել որ կացութեան տէրը Սօֆիաի դօմիթէն է այս պահուս: Սակայն կարծէ դիտել տալ որ Չինական տագնապը, հակառակ սեղանաւորական փոփոխման մէջ մուտքին — ինչ որ յառաջընթաց նշան մ'է մօտալուտ վախճանին — կը շարունակէ դեռ զբաղեցնել մասնաւորապէս Ռուսիոյ ուշադրութիւնը և թերեւս իսկ անխորտ իրադարձութեանց անակնկալներ վերապահած է Եւրոպայի Ուրեմն ճշգիւ ներկայ ժամը չը թուիր հաշտ ըլլալ պատեհախնդիր և ազդեցիկ միջամտութեան մը համար: Այս իրողութիւնը թերևս փոքր լոյս մը կը նետէ այն աւերելոյթ հակասութեան վրայ որ կայ թէ՛ Ռուսիոյ արարքներուն միջև — որոնցմէ մին է Դրան վերջերս ըրած յայտարարութիւնը որով կը պահանջէր վերջ մը դնել խռովութեանց, և թէ՛ Քարավէլօֆի — որուն օրով կատարուեցաւ սակայն Արևելեան Ռումէլիի միացումը — ձեռք առած միջոցներուն վրայ Պորիս Սարաֆօֆի և քօմիթէին նկատմամբ:

Ասոնք են ահաւասիկ այն տարրերը որոնք հաշտ գետին մը կընծայեն Արևելեան խնդրին մօտալուտ բացման հաւանակութեանը մասին ճշմարտանման ենթադրութեանց որոշ շարքի մը, որոնց մէկ քանիին առջև կանգ առնել բոլորվին անօգուտ չէր թերևս:

Ա. Ճ.

ՓԱՐԻՉԷ ԵԳԻՊՏՈՍ

(Շար. Ա. քիւհն եւ վերջ)

Խայասուր Ներսիսեան. Պարսկահայ վաճառական գոհարեղենաց, ազքատասէր և ամենուն մատչելի. իսկ իր տիկինը՝ տիպար ամուսին մ'է,

անոնցմէ մէկն ալ ամուսնացուցած ուտուն տեղ ըրած է. աշխոյժ, անխոնջ ազգասէր, իր սեւին պարծանքը, օրինակելի Հայուհի մը, որուն բոլոր երջանկութիւնը կը կայանայ թշուառները մխիթարելու մէջ նիւթապէս ու բարոյապէս. կը բարերարէ առանց վատելու բարերարեալներուն ցոյց տուած ապերախտութենէն ալ:

Սաւոռեշեան Եղբարք. Գոհարավաճառ, հանրային համակրանքի առարկայ, հեզաբարոյ, մարդասէր, ազգօգուտ ձեռնարկներու մասնակցող պատուական Հայեր:

Թընկըր Եղբարք. Սեղանաւոր, ընտիր յատկութեանց տէր, գեղարուեստներու պաշտպան, զգայուն ու հեզահոգի, տոհմասէր Հայեր:

Յրանսուա Աւրանկիւղ. Ագնիւ ձիւքերով օժտուած երիտասարդ մը, այնչափ բարեգործ, որչափ գաղտնապահ. այնչափ անձնուէր, որչափ համեստ. ոսկի սիրտ մ'ունի, վիճակէ հասկցող, անձայն անշուղի հայրենասէր մը. իր անթիւ երախտիքները կը ճանչնան միայն իր բարերարեալները. փողի թըմբուկի ձայնով չ'է որ զանոնք կը հոչակէ, բարիքը բարութեան և ոչ թէ փառասիրութեան համար կը գործէ:

Նիկողոս Մանուկեան. — Ներկի գործարանատէր, իր գործին զաւակը, կամքի տէր, գործնական մարդ մը. բարեգործական ձեռնարկներու մէջ ուղղամտութիւն եւ անձնութիւն ցոյց տուած է. հանրութեան մատչելի՝ իր հեզակ նշտագրովը:

Ճեփահիրճեան Եղբարք Արաւ եւ Լեռն. — Բարեկիրթ ու ազնուական ընտանիքի գլուխներ, ո'չ նուազ գործունէութիւն ցոյց կուտան ազգօգուտ ու մարդասիրական ձեռնարկներու մէջ:

Գալըպճեան Եղբարք. — Սվաճեան ընտանիքէն. որ և է հանրօգուտ գործունէութենէ չ'են խոյս տար և միշտ օգտակար եղած են իրենց յանձուած ազգային պաշտօններուն մէջ, իրենց

վաճառ, վարկի տէր, վստահելի, թէ՛ մերայնոց և թէ՛ օտարաց քով. ամեն ազգօգուտ ձեռնարկներու կը մասնակցին ու երբէք չ'են զլանար իրենց աշակցութիւնը:


Սխալ Աշնեան. — Պարկեշտ, գործունեայ, ազնիւ երիտասարդ մը, տարիներով էգնաբանի քով պաշտօնավորելէ ետք՝ անկախ գործի մը տէր եղած է այսօր և առիթը չը փակցնէր իր ազգակիցներուն օգտակար ըլլալու:

Մարտիկ Միկնաւեան. — Գրողէտներու, արուեստագէտներու և ազգային գործիչներու բարեկամ, զնահատող ու քաջալերող. յանգուզն, եռանդուն ու անխոնջ գործող մը, մանաւանդ ազգօգուտ ու բարենպատակ ձեռնարկներու մէջ ուղղամիտ ու բարեսիրտ Հայ մ'է:


Փարիզի հայ գաղութին մէջէն իմ սերտած անձնաւորութեանց վրայ սոյն հակիրճ տեղեկագրութիւնն ընելէ յետոյ, կ'ընդունիմ որ յիշողութենէ վրիպած ըլլան ուրիշ հայրենակիցներ ալ, որոնք քիչ թէ շատ օգտակար եղած են ու տակաւին կ'ըլլան հանրութեան: Սակայն, գասակարգ մը կայ Փարիզի մէջ, ուրիշ խմորէ, ուրիշ խառնուածքէ, որուն վրայ կ'արժէ խօսիլ: Հրասարակի վրայ առաջնակարգ վաճառականներ, բայց իրենց սոհմակիցներուն աչքին կրողներ կ'երևին. պատճառ, ասոնք շրջապատող պաշտօնեաները, որոնք իրենց բարոններուն աչքը մտնելու համար զանոնք ազգակիցներու աչքէն կը հանեն, չար թեւադրանքներ ու գէշ խորհուրդներ ներշնչելով անոնց. այդ փոքրաւորները կ'իշխեն իրենց մեծաւորներուն վրայ. և յաճախ առաջիններն են որ ազգային հանգանակութեանց մէջ վերջիններուն բռնելիք ճամբան կը գծեն: Ճշմարիտ կարօտեալները կը մերժուին ստէպ, և խաչագողները կը վարձատրուին, հերիք է որ մեր այդ շնչերուն պաշտօնէից համակրանքը վայելած ըլլան... Այս անմատչելի եւ անմեկնելիօրէն

կ'ունենան երբեմն մարգասիրական ներշնչումի վայրկեաններ ալ, և զարմանալի հակասութիւն, կը հաճին երբեմնակի մտաբերել իրենց ցեղակիցները. գորովի ու արգահատանքի արցունքն աչքերնին՝ կ'սկսին մօտենալ թշուառի մը, որ, սովորաբար անարժանին մէկը կ'ըլլայ. բան մը կը դնեն ակին մէջը, և այսպէս, դիտեն սիրաշահել խեղճ ու միամիտ հասարակութիւնը: Սակայն, ամբողջութեամբ առնուած, անտարբեր, անկարեկիր ու նիւթապաշտ մարդիկ են այս գասակարգի Հայերը, որոնց անունները թուելու հարկ չ'կայ: (1)

ԼԵՒՈՆ ՍՍՍՏՈՒՐԵԱՆ



Լ Ր Ա Ք Ա Ղ



— Անգղ. Գահիկն րեկնածու մը Պ. Հօանէթ, Նիւ-Ետքի բանւորական մեծ ընկերակցութեան մը հիմնադիրը մեկնած է Բարիզ, ուր մտադրած է պայքար մը բանալ ինքզինք Անգլիոյ օրինաւոր թագաւորը ճանչցնելու նպատակով. կը յայտարարէ թէ՛ ինք ուղիղ դիժով կը սերի Սթուարթներու արքայական ճգնմէն և իր փորձին յաջող ելքին վրայ հաւատք ունենալ կ'երևի:

— Ռուսիոյ խոռվորթուհի՝ Վարչավիայէ Բչայն ժողովարէ քաշուած հեռագիր մը կըսէ թէ՛ յեղափոխական ձգտումներու և շարժումներու մասին աւելի վրդովիչ լուրեր կը հասնին Ռուսիայէն: Մաքը քանի մ'օր առաջ Բեթրոպուրկի մէջ բռնեց Լոնտոնայէն եկած երկու ծրարներ, որոնք ուժանակով լեցուն ուսմբեր կը պարունակէին:

Բեթրոպուրկի մէջ յայտարարութիւն մը ցրուեցաւ, որով կը ծանուց-

(1) Մեր յարգելի յօդուածագիրը յառաջիկայ քիւով պիտի գրէ Բարիզի «Բրիս. Երիտասարդաց Միութիւն», անուն քրանսական ընկերութեան վրայ:

ուի ինքնասպանութիւնը 12 ուսանողներու, որոնք դատապարտուած էին զինուորական ծառայութեան 'ի Սր. պերիա:

— Թայեցի Կ. Պոլսոյ թղթակիցը 4 Յունիս թուով կը գրէ թէ՛ Իտալիա Միջերկրականի մարտանաւերէն երկու յաճախորակ զրկած է Քորֆու, ուր հրահանգի կ'սպասէ անմիջապէս մեկնելու համար Բրէվէզա, (եթէ գոհացում չ'տրուի Բ. Գոնէն,) ուր թուրք պաշտօնեայ մը բռնի մտած է իտալացիի մը տունը:

— Կ. Պոլսոյ Միացեալ-Նահանգաց ու Ռուսիոյ դեսպանները Բ. Իրան ազգու բողոք մ'ըրին Արտասահմանի Հայոց 'ի Թուրքիա վերադարձն արգիլող հրամանին դէմ:

Հայաստանի մէջ կայութիւնը կը վատթարանայ օրէ օր. Գուրգերը կը բռնադատեն Հայերը մեկնիլ 'ի Ռուսիա. գիւղերնին կ'այրեն ու շատ մը խժգժութիւններ կը գործեն:

— Սերպիական դեսպանն ազգարարեց Օսմ. կառավարութեան որ եթէ Ալբանները շարունակեն իրենց ոսնձգութիւնները դէպ 'ի սահմանադրուի, Սերպ կառավարութիւնը պիտի կեդրոնացնէ իր զնգերն ու արգիլէ Ալբանները սահմանադրուին անցնելէ ու անդադրուի խռովութիւններ առթելէ:

— Սելանիկի թուրք իշխանութիւնները կը հալածեն ու ամեն օր կը ձերբակալեն Մակեդոնական դովիթէի անդամները: Հարիւրներով ձերբակալումներ կ'ըլլան ու բանտերը լեցուած են: Երեք հարիւրէ աւելի բանտարկեալներ իրենց դատավճիռը կ'սպասեն անհամբեր:

— Վիեննայէ կը հեռագրուի թէ՛ Բ. Գուռը գոհացում տուեր է իտալական պահանջումներուն, Բրէվէզայի (Նիկոպոլիս) միջադէպին առթիւ:

Գոհացման արարողութիւնը կատարուած է Եանեսա, ուր Իտալիոյ դէմ անարգանքը անդի ունեցած էր: Եանեսայի մասին աստուծոյ կողմէն Բ. Գուռը

մ'ըրեր է իտալական հիւպատոսին, որուն խորին ցաւ յայտնած է քաղաքական վերջին դէպքերուն նկատմամբ:

— Քորֆուէ կը հեռագրուի. Երկու ասարդ Թուրքերուն Էնթորեսաիօն լրագիրը յօդուած մը հրատարակեց որուն մէջ կ'ըսէ թէ՛ Հայերը, Ալբաններն ու Մակեդոնացիները խիստ մօտ օրերու մէջ պիտի դումարուին վիճաբանելու Պալքաններու խնդրին վրայ: Երկու ասարդ Թուրքերը ներկայացուցիչ պիտի ունենան այդ դումարման մէջ: Վիճաբանութեան հիմ ընդունուած է որ Սուլթանը Պալքանեան բնակչութեան հասարակաց թշնամին ըլլալով ամեն լուրջ բարենորոգում պէտք է սկսի Երլտրզէն, որովհետև Օսմ. Ժողովուրդը չէ՛ քաղաքակրթուած: Յեղափոխականները կը յարեն թէ՛ Արքունեաց մէջ իրենց յեղափոխութիւնը յաջող ելք մ'ունենալէ յետոյ, Օսմ. կայսրութիւնը պիտի դառնայ եւրոպական տէրութիւններէն անշատ անդամ մը, և յեղափոխութիւնը պիտի վերջ գնէ Հայկական, Ալբանական ու Մակեդոնական հարցին:

— Կ. Պոլսէն ամսոյս 9 թուով հեռագրէ մը կ'իմացուի թէ՛ Բ. Գուռը վերջապէս գոհացում տուած է 1896 ի հայկական ջարդերուն առթիւ. ֆրանսական պահանջումներուն և թէ՛ միջոցներ ձեռք առած է 69000 ոսկի վճարելու Մեծին Բրիտանիոյ, նոյն շրջանին կրած կորուստներուն փոխարէն:

— Բարբի լրագիրը կը կարծէ թէ՛ Վիլհելմ կայսրը մօտեքս Բարբի պիտի երթայ, Շէրպուրի ֆրանսական նաւատորմի շքէ անցնելէ յետոյ:

— Իշխան Ուխթումսքի կարծիք յայտնած է թէ՛ Բէքինը պարպելու համար հարկ չ'կայ սպասել Արքունեաց վերադարձը: Յայտնի է թէ՛ իշխան Ուխթումսքի այն մարդերէն է, որոնք խիստ լաւ կը ճանչնան Չինը, եւ հոն խոշոր շահեր ունին: Իր կարծիքով, Գերմանիոյ կայսրն փառասիրութիւնն ունեցած է Չինացիներու դաղութ մը,

միլիոնի թիւ մը կազմելու Շան-Քունկի
և Շան-Սիի մէջ: Իերման գնդերը կըր-
նան Ձի-Լիէն քաշուել, բայց գերմա-
նական ծրագիրը չը փոխուիր:

Տէրութիւնները պէտք է ետ քա-
շէին իրենց գնդերը, գեսպանատանց
ազատուելուն յաջորդ օրը: Հիմայ, ա-
նոնք, իրենց խտուածիւններով Ձինաց
մէջ արծաշծեցին վրէժխնդրութեան
ծաշաւ մը, որմէ պիտի ծագին նորա-
նոր միջադէպեր ու նոր միջամտութիւն
մը: Ընելու միակ բանը, եթէ շատ ուշ
չէ՛, Ձինացիները Բէքինի մէջ թողուլ է:

— Այս պահուս եւրոպական բոլոր
գահլիճները յուզուած են նոր ու իտ-
շարիկի խնդրով մը. Մեդլիա բացա-
ճակապէս կը յայտարարէ թէ՛ չը պիտի
պարպէ Ձինաստանը... ասկից պիտի
պայթի թերևս տաշիներէ ՚ի վեր վախ
ազդող Անգլո-Ռուսական ընդհարումը:

Նոր քերք մը. — Ժողովուրդիկն
Հաւարը կարգացինք, կարչնեղ ու խան-
գոտ դռուներու շունչը կը թափառի
հոն. բոլոր կտորներն ալ սրանչելի,
բայց, թողներուի նշանակել հոս, քիչ
մը գժուարամարտելի՛ ժողովուրդին
համար. ինամով ընտրուած նիւթերովը.
բարձր ոճովը, լեզուին նորութեամբը,
գարգացեալներուն հաւար կոչուելու
արժանի թերթ մը: Իրական յորինու-
ածքին հաւար այսչափ. իսկ թերթը
ինչպէս կ'երևի առաջնորդողէն, կու-
սակցութեանց ազդեցութենէն աւելիս,
ժողովուրդին շահերուն պաշտպանու-
թեամբը զբաղելու նպատակով հիմ-
նուած է: Մազլիները որ այդ բարձր
և յաւետ սրաշուի նպատակն իրագոր-
ծելու համար յաշատեէ ժողովուրդիկն
Հաւարը:

Հայերն ու Սուրբանը. — Վան եւ
չը՛րակայքը տիրող անիշխանութիւնը
հեազհետէ ապիտարեր կը դառնայ.
վերջերս Այդ. Պատրիարքարանը, և Կ.
Պալատ Անգլ. Իեսպանատունը բոշք-
քած էին այն կողմերը գտնուած խրժ-
գժանքներուն գէմ: Ամսայ 5 թուով
հետագրէ մը կ'իմացուի թէ՛ այն կող-

ներ ու կեղեքումներ գործուած են
քուրտերուն կողմէն: Ահա՛ւասիկ թէ
ի՛նչպէս կը պատասխանէ Բ. Գուռը
Պատրիարքի կամ Իեսպաններու բողոք-
ներուն: Այդ թուականէն մէկ երկու-
օր առաջ ալ, Սուլթանի կառավարու-
թիւնը (°) մասնաւոր շը՛շարբրականնե-
րով ազդարարած է տէրութեանց մօտ
գտնուող Օսմ. Իեսպաններուն որ Յու-
նիս 1էն սկսեալ Աշտասահմանի Հայե-
րուն ՚ի թուրքիա մուտքն արգիլուած
է: Սակայն այս արգելքը նշանակու-
թիւն չը կընայ ունենալ Եգիպտահա-
յոցս համար, քանի որ Օսմ. Վեհապե-
տին անուանական գերիշխանութիւնը
վայելող երկրի մը մէջ կ'ապրինք:

— Կը հաւատուի թէ՛ Պ. Լեւոն
Մկրտիչեան մինչև ցարդ հասկցուածին
հակառակ, երբէք ներկայացուցիչ ե-
ղած չէ Եգիպտոսի Վեր. Հնչ. Վար-
չութեան:

— Նուագածուաց ընդհ. ժողովը
պիտի դումարուի ամսայ 17ին բչ. դի-
չեր ժամ 9ին հայկ. մեծ սրճարանին
սրահը: Կը խնդրուի բոլոր ընկերա-
կիցներէն ներկայ գտնուիլ:

Գործադիր-Ժողովոյ

- | | |
|---------------|----------|
| Գանձապէս | Ասեկապէս |
| Յ. Գարագիղեան | Գ. Սիմոն |

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

(Շար. Ա. թիւն եւ վերջ)

Դիւսնագիտութիւնը սակայն, երբ ոչ
լուծուած, գոնէ մասամբ մը հարթուած կը
նկատէ շինական դժուարութիւնները, որոնք
կարծես քե պէտք է բարձուած հոշակութիւն,
որպէս զի եւրոպայի դիւրիմ ըլլայ աւելի մօ-
տեմ գբաղելու Արեւելեան հրաւապ հարցով,
որ Մակեդոնական ու Հայկական վերջին
դեպքերուն վրայ մանաւանդ, եւ Ապսիլ Հա-
մբի միջազգային նամակասանց վրայ փոր-
ձած այնքան ծաղիկի որչափ յիմարտեմ երե-
ւոյ միջոցներէն յետոյ - որոնք վիժեցին - աւելի
սուր կերպարանք մ'ստանալ կը բուի: Ու
եւրոպոս նարեմ կ'ստիպուի, հարկի քիթեցած
Թայրագոյն Արեւելի բարդութիւններէն, վե-

ցին: Եւրոպական մամուլը սկսաւ լրջօրէն ձեռք առնել զայն ոչ նուազ իրական երկիւղի նշաններ ցոյց տալով արիւննեղութեան ու սարսափի քրջանին վերադարձին համար: Իրեւու արդի կացութեան մէջ, Եւրոպայի ու Արեւմտեան Ասիոյ քաղաքներուն նոր սրբազոտ-քիւններ կրելու հաւանականութիւնը հետզհետէ կը շեղուի: Կոստ Կոլուխովսկիի նաոր, բաւական նշանակալից, անգլիական մամուլին կողմէն ալ եւ ալ մեկնութիւններու առիթ կուտայ. ստոյգ էր քե՛ր Երեւակ Դաւենակցու-քիւնը նոր պայմանաւանակ մը պիտի նորոգուի, բայց ո՞վ գիտէ ի՞նչ անակնկալներ պահուած են Ֆրանսիոյ Ժողովի մահուանէն յետոյ: Լոնտայի ու Պերլինի մէջ համանման կարծիքներու գոյութիւնը կը տարածայնուի. կը տարակուսուի սակայն քե՛ր Գերմանիան լաւ աչիով չ'պիտի նայի Սեյանիկի նկատմամբ Աւստրիոյ ստամ իյծերուն, քե՛ր եւ այս վերջինը յանձն առնէ Գերմանիոյ քոյուղ կայսրութեան գերմանական նահանգներն իբրեւ փոխարինում: Իսկ Խալիան, բացարձակապէս հակառակ է թրիքսի ու թրանքեքի գերմանացման գաղափարին. կը սնդեմ իսկ քե՛ր Գերմանիան այս պահուս կը ջանայ մօտենալ Ռուսիոյ, մինչդեռ այս վերջինը հետզհետէ Արեւելի մէջ Նիսոյա Ա. ի քաղաքականութիւնը գործադրելու դիտումներ կը ցուցնէ, ինչ որ հասկնալ կը հակառակի անգլիական ազդեցութեան: Միւս կողմէն ստոյգ էր քե՛ր բրիտանական դիւանագիտութիւնը մեծ ուժով կը գործէ պայքանեան կեդրոններուն մէջ, ուր խլորտումի խմորումները կրնան վայրկեան վայրկեան ստիպել բուրքերը զինուորական գործողութեան մը: Անտարակոյս Անգլիան կը ջանայ սրբազոտելու քաղաքներն Արեւելի մէջ, կասեցնելու համար Ռուսիոյ խաղաղութիւնը ի Ասիա. նոյնչափ ալ ստոյգ էր քե՛ր Բեքրապուրկի դիւանագիտութիւնը ձեռքերն ծալլած չ'են նստի:

Փակեմ մայմեկութեան էջը, Փարիզի մեր յարգելի պատեօնակիցներէն թրան 18 Մարտի խմբագրականին ամփոփումովը:

Օրէ որ կը ծանրանայ կացութիւնը Մակեդոնիս, ուր մտերու խմորումը կ'ընդարձակի բոլոր վիլայեքներուն մէջ: Երեք տարիէ ՚ի վեր Իտալիան է Արեւելի մէջ խաղաղութիւնը պահպանողը, — գէր այսպէս կը խօսուի Վիեննայի մէջ — ու Աւստրիոյ հետ բովանդակ Եւրոպան հանդիմով դիտեց Յունաստանի ու Ռումանիոյ վեհապետներուն հանդիպումը Ապրիլի մէջ, լաւ գծուած համաձայնութեան մը հիմերը դնելու միակ նպատակով: Այս պայքանեան Տերութիւնները մեծ զարկ մը տուած կ'ըլլան Մակեդոնիոյ խաղաղացման, Դուռն ու տերութիւնները հրաւիրելով Պերլինի դաւանագրին 23 ռդ յօդուածը գործադրելու, միանգամ ընդ միտ

խալանս: Ըլլալու համար այս ու այն նախանորդի փառաստեց ձգտումները: Եւ արդէն ուրիշ նախա չ'կայ, եթէ կ'ուզուի խեղդել Մակեդոնիս սիրով ողբալի կացութիւնը. ինչպէս որ տերութիւններն ալ պայցոյց մը տուին, այս ձեռք, հաւաքաբար պահանջելով Դուռն այդ նահանգին համար նախագծուած բարեկարգումները: Ասեմ մը շատ վախցուեցաւ քե՛ր Ապրիլ շաբաթ այդ յանձնարարութեան երես տուած՝ ուր էամ կանուխ քիստոնէից զարդի բուականը չը բաւար նորէն, բայց հիմա, այդ վախն անցած է, եւ Կ. Պոլսոյ Եւրոպական ներկայացուցիչներուն դիրքն առաջուրէն աւելի ամրացած կը կարծուի: Վիեննական Էնֆորմասիօն քերքը, որ լաւատեսութեաններէն կը կարծուի, կ'ըսէ քե՛ր ասեմէն մ'ի վեր Ֆրանսայի, Ռուսիոյ եւ Խալիոյ միջեւ կարծիքի փոխանակութիւններ կ'ըլլան Մակեդոնիոյ հարցին համար, զոր վերջովի ինչու մը մէջ մտած կ'երեւակայէ Բեքրապուրկի դաշխը, Արեւելեան Հարցը բոլոր անուի բարդութեամբը նորէն բանալու աստեան: Միեւնոյն ասեմ, Խալիոյ մէջ, ալբանական Դոկտրէ մը Վ. Էմմանուէլի պատեպանութիւնը կը խնդրէ, այս ազգին պահանջումները ներկայացնելով. իսկ անդին, Արեւելի մէջ, այնպիսի դեպքեր տեղի կ'ունենան, որոնք աւելի մեծ երկիւղներ կ'առքեն: Միջազգային քրթաւարութեան միջադէպը լրջակորէն ցոյց տուաւ քե՛ր շատ զեռ խորհուրդ տրուած էր Սալոնիկին, որ ՚ի վերջոյ ամօքալի պարտութեամբ մը փակեց խնդիրը, անգամ մ'ալ հաստատելով իր աղիկարութիւնը, Եւրոպայի կամքին առջեւ:

Սեյանիկի վալին յանկարծ կանչուեցաւ, ՚ի Պոլիս, իր քարտուղարն ալ արգելի քակ առնուեցաւ. ու վիլայեքի վարչական մարմնին մէջ կարեւոր փոփոխութիւններ կ'իմացնեն. այս ամենը կը վերադուրի Պատեօն Մարեալ Պիպրոքային, գերման դեսպանին այցելութեան, որ խեղճ Պուլկարներու եւ Մակեդոնացիներու վրայ գործուած խոզմութիւնները հաստատելէ յետոյ յաջողեք է այս դարմանումը ձեռք բերել: Ահա՛ նոր ապացոյց մ'ալ Վիլհէլմ Բ. ի եւ իր գործակալներուն՝ ՚ի Թուրքիա վայելած ամենակարողութեանը: Սակայն, այս անուրանալի յայտնութիւնը չէ՞ պատասխանատուութեան, որ կը ծանրանայ արեւմտեան դիւանագիտութեան վրայ, երբ, այսպիսի ազդեցութիւն մ'ի գործ չը դնէ, եւ միքէ՞ ասով չը հասկցուի քե՛ր կարծուածէն շատ աւելի ծանր է կացութիւնը Մակեդոնիոյ մէջ: Թո՛ղ ներուի յուսալ քե՛ր Եւրոպա արեւմտեան պիտի օգտուի փորձառութեան դասերէն եւ ՚ի պատիւ իրեն պիտի ջանայ արգիլելու արեւելի մէջ նոր տագնապի մը պայքումը, Պերլինի դաւանագրին 23 ռդ յօդուածին գործադրութեամբը: